

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր
Հ Ր Ա Մ Ա Ն**

N 269-L

«04». 03. 2020թ.

ք.Երևան

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՎԱԳ
ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման պահանջների համաձայն սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման ծրագրից օգտվելու նպատակով դիմում-հայտերի ներկայացման, դրանց հաշվառման և զինծառայողներին ծրագրում ընդգրկման գործընթացը կանոնակարգելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել՝

1) հիփոթեքային վարկավորման ծրագրից օգտվելու նպատակով ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն ձև 1-ի,

2) հիփոթեքային վարկավորման ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու դիմումի ձևերը՝ համաձայն ձև 2-ի և ձև 2.1-ի,

3) հիփոթեքային վարկավորման ծրագրի մասնակիցների ռեեստրի ձևը՝ համաձայն ձև 3-ի,

4) հիփոթեքային վարկավորման ծրագրի շրջանակներում համագործակցող վարկատու կազմակերպություն ներկայացվող տեղեկանքի ձևը՝ համաձայն ձև 4-ի,

5) հիփոթեքային վարկավորման ծրագրի ապահովման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում՝ ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով վարչությունը, որն իրականացնում է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշմամբ և սույն հրամանի պահանջների համաձայն զինծառայողների կողմից վարկավորման ծրագրից օգտվելու գործընթացի ապահովման գործողությունները՝ համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի իրավասու կառուցվածքային ստորաբաժանումների և զորամասային օղակի հետ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈւ գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, զորամիավորման, միավորումների, զորամասերի հրամանատարներին, ՀՀ պաշտպանության նախարարության պետական հիմնարկների պետերին՝

1) ենթակա սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողներին ծանոթացնել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման (այսուհետ՝ ծրագիր) և սույն հրամանի պահանջների մասին՝ հատուկ տեղեկացնելով, որ՝

ա. ծրագրից չեն օգտվում զինծառայողների համար օրենքով սահմանված բնակարանային ապահովության շրջանակներում բնակարանային պայմանների բարելավում ստացած զինծառայողները.

բ. ամուսիններ հանդիսացող զինծառայողներին ծրագրի շրջանակում հիփոթեքային վարկ տրամադրվում է միայն ամուսիններից մեկին,

գ. բնակելի տուն կառուցելու նպատակով ծրագիրը գործում է՝ զինծառայողի անվամբ սեփականության (համատեղ կամ բաժնային սեփականության) իրավունքով գրանցված տնամերձ կամ բնակելի կառուցապատման հողամաս առկա լինելու և բնակելի տուն կառուցելու շինարարական թույլտվություն ունենալու դեպքում,

2) ապահովել ենթակա սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից ծրագրի և սույն հրամանի պահանջներին համապատասխան դիմում-հայտերի ներկայացման, ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և ծրագրի շրջանակներում անցկացվող վիճակահանությանն անարգել մասնակցության գործընթացը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով վարչության պետին՝

1) երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր գլխավորությամբ և շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ ստեղծելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագիծ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման և սույն հրամանի պահանջների համաձայն զինծառայողների դիմում-հայտերի ստացման և վիճակահանության անցկացման գործընթացն ապահովելու նպատակով,

2) մեկամսյա ժամկետում, համագործակցելով ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության հետ, ներկայացնել առաջարկություն՝ ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով վարչությունում վարկավորման ծրագրի ապահովման գործառույթային պարտականություններով ներքին կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ:

4. ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝

ապահովել սույն հրամանի լուսաբանումը և հրապարակումը ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում:

5. Հրամանը հասցնել ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետին, ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈւ ԳՇ պետի տեղակալներին, ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարին, ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈւ գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, զորամիավորման, միավորումների, զորամասերի հրամանատարներին, ՀՀ պաշտպանության նախարարության պետական հիմնարկների պետերին:

(անունը, ազգանունը)

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

հիփոթեքային վարկավորման ծրագրից օգտվելու

1. Ես՝

(զինծառայողի գորամասը, ծառայության տեսակը, զինվորական

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

(ծննդյան օրը, ամիսը, տարին, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

(ընտանիքի անդամները, ազգակցական կապը, անունը, հայրանունը, ազգանունը)

ցանկանում եմ մասնակցել բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման ծրագրին:

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) իմ և ընտանիքիս անդամների անձը և ազգակցական կապը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ թերթից,

2) իմ ծառայողական վկայականի պատճենը՝ թերթից,

3) ----- -ի տեղեկանքը՝ ինձ (ներառյալ համավարկառուներին) _____
(բանկի անվանումը) (վարկի չափը)

հիպոթեքային վարկ տրամադրելու պատրաստակամության մասին՝ թերթից:

3. Չինծառայողի կողմից անհատական բնակելի տան կառուցման նպատակով հիփոթեքային վարկավորում ստանալու մտադրության դեպքում փաստաթղթերին կցվում է նաև տնամերձ հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը:

4. Հայտարարում եմ, որ՝

1) սույն դիմում-հայտը ներկայացնելու փաստը համարվում է օրենքով և վարկավորման ծրագրով քաղաքացիաիրավական հարաբերությունների՝ պետության առաջարկած պայմանների ընդունում իմ (համավարկառուների) կողմից,

2) սույն դիմում-հայտը ներկայացնելու փաստը հանդիսանում է օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքից հրաժարում իմ կողմից (եթե զինծառայողը օրենքով սահմանված կարգով հաշվառվել է որպես օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունք ունեցող):

(անունը, ազգանունը)

ԴԻՄՈՒՄ

Հիփոթեքային վարկավորման ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու

1. Ես՝ _____,

(զինծառայողի զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

հանդիսանում եմ մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային

վարկավորման ծրագրի մասնակից՝ _____ կնքված հիփոթեքի
(կնքման օրը, ամիսը, տարին)

պայմանագրի համաձայն, և զինվորական ծառայությունից արձակվել
եմ _____

(արձակման հիմքը՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կամ առողջական վիճակի

_____ հիմքով և (կամ) ունեմ _____

պատճառով ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու)

(թվով և տառերով)

խմբի հաշմանդամություն, որը ստացել եմ _____

(պատճառական կապը)

հետևանքով: Խնդրում եմ սահմանված չափով և ժամկետում մարել հիփոթեքային վարկի մայր
գումարը, որը զինվորական ծառայությունից արձակվելու և (կամ) հաշմանդամ ճանաչվելու
օրվա դրությամբ կազմում է _____ դրամ:

(թվով և տառերով)

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

- 1) իմ անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ թերթից,
 - 2) արձակման հրամանի և (կամ) հաշմանդամության կենսաթոշակի վկայականի և հաշմանդամության պատճառական կապը հաստատող փորձաքննական եզրակացության պատճենները՝ թերթից,
 - 3) _____-ի տեղեկանքը՝ զինվորական ծառայությունից արձակվելու և (կամ)
(բանկի անվանումը)
- հաշմանդամ ճանաչվելու օրվա դրությամբ հիպոթեքային վարկի մայր գումարի չափի մասին՝
թերթից:

Դիմող՝ _____ «____» _____ 20 թ.

(ստորագրություն, անուն, ազգանուն)

(անունը, ազգանունը)

ԴԻՄՈՒՄ

Հիփոթեքային վարկավորման ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու

1. Ես՝ _____,
(անուն, հայրանուն, ազգանուն)

հանդիսանում եմ մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային

վարկավորման ծրագրի շրջանակում _____ հիպոթեքի պայմանագիր
(կնքման օրը, ամիսը, տարին)
կնքած և _____ հետևանքով զոհված (մահացած)
(պատճառական կապը)

_____ զինծառայողի
(զինծառայողի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքի անդամ: Խնդրում եմ սահմանված չափով և ժամկետում մարել հիպոթեքային վարկի
մայր գումարը, որը զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ կազմում է
_____ դրամ:

(թվով և տառերով)

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

- 1) իմ անձը և զոհված (մահացած) զինծառայողի հետ ազգակցական կապը հաստատող փաստաթղթի պատճենները՝ թերթից,
- 2) զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառական կապը հաստատող փորձաքննական եզրակացության պատճենը՝ թերթից,
- 3) ----- -ի տեղեկանքը՝ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ
(բանկի անվանումը)
հիպոթեքային վարկի մայր գումարի չափի մասին՝ թերթից:

Դիմող՝ _____ «___» _____ 20 թ.
(ստորագրություն, անուն, ազգանուն)

**ՌԵԵՍՐ
ՀՒՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ**

Հ/Հ	Զինծառայողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին	Զինծառայողի կոչումը և զորամասը, բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր հաշվառված լինելու դեպքում՝ հաշվառման վերցնելու օրը, ամիսը, տարին	Ըստ բնակության վայրի հաշվառման հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	Զինծառայողի դիմում-հայտի ստացման օրը, ամիսը, տարին	Զինծառայողի ընտանիքի անդամի ազգանունը, անունը, հայրանունը, ազգակցական կապը	Վարկավորումը անհատական բնակելի տան կառուցման նպատակով ստանալու մտադրության դեպքում՝ տնամերձ հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը և տրման օրը, ամիսը, տարին	Համագործակցող վարկատու կազմակերպության (բանկի) կողմից տրված տեղեկանքում առկա վարկավորման չափը	Հիփոթեքային վարկավորման ծրագրում ընդգրկվելը (վիճակահանության մե կամ առանց դրա)՝ ըստ յուրաքանչյուր տարվա համար սահմանված քանակի, և կնքված վարկավորման պայմանագրի վերաբերյալ տվյալները
1	2	3	4	5	6	7	8	9
2020 թվական								
2021 թվական								

ՏԵՂԵԿԱԼՔ

Հիփոթեքային վարկավորման ծրագրին մասնակցելու մասին

Տրվում է _____

(զինծառայողի գորամասը, ծառայության տեսակը,

զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

(ծննդյան օրը, ամիսը, տարին, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

առ այն, որ վերջինս ներկայացրել է դիմում-հայտ՝ ՀՀ պաշտպանության նախարարության սպայական և ավագ ենթասպայական կազմերի զինծառայողների համար սահմանված բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման ծրագրին մասնակցելու նպատակով և ընդգրկվել է _____ հիփոթեքային

(տարեթիվը)

վարկավորման ծրագրում, որի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը պատրաստակամ է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշմամբ սահմանված պայմաններին համապատասխան իրականացնել զինծառայողի հիփոթեքային վարկի կանխավճարի տրամադրումը և տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորումը, ինչպես նաև լրացուցիչ երաշխիքների շրջանակներում հիպոթեքային վարկի մայր գումարի մարումը:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու _____:

(բանկի անվանումը)

ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության

պետ՝----- « ____ » _____ 20 թ.

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.